

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
2022

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 5

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար: Ուշադիր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշաններ:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում միևնույն տառը (փակագծերում նշվածը):

- 1) հր-շ, ալժմ-ական, որևից-, տ-նդ (ե)
- 2) նախ-ան, փա-ցնել, արցուն-, ս-եմավոր (ք)
- 3) ա-ճատել, գա-թել, տա-տակ, չքնա-ատես (ղ)
- 4) գու-կան, աշխույ-, օ-արակ, դ-նդակ (ժ)

2 Ո՞ր շարքի ոչ մի բառի բաց թողած տեղում երկինչյուն չի գրվում:

- 1) գ-նագեղ, ք-նավոր, ատամնար-ժ, հ-սահաստ
- 2) ձ-լարան, ողջ-նել, աղյուս-կ, ընկ-զենի
- 3) փ-թեռանդ, երև-թական, արշալ-ս, ուխտադր-ժ
- 4) հ-զախռով, խարտ-շ, կապ-տակ, բ-րաստան

3 Ո՞ր շարքի բառերի (բառակապակցությունների) բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:

- 1) ԱՖՂԱՆՍՏԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԵՌՅԱԿ ԴԱՇԻՆՔ, ԴՌՆԻ ՌՈՍՏՈՎ
- 2) ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈՂ, ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ, ՕՆՈՐԵ ԳԸ ԲԱԼՁԱԿ
- 3) ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, ԼԱ ՄԱՆՇ, ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
- 4) ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ, ՄԵԾ ՄԱՍԻՍ, ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՎՐՈՍ

4 Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում գաղտնավանկ կա:

- 1) կայսր, ըմբշամարտ, հնարամիտ
- 2) ծանր, մեղրամոմ, կրթություն
- 3) մկրատ, արագընթաց, հայրդ
- 4) հետզհետե, դպրոց, վնասագերծ

5 Ո՞ր շարքի բոլոր բառերում է(ե) ձայնավորի հնչյունափոխություն կա:

- 1) կիզանուտ, քմահաճույք, համատիրություն, միջադեպ
- 2) գիտակ, վիրահատել, ծիսակատարություն, դիպակ
- 3) սիրահոժար, մտամոլոր, գիրուկ, միգապատ
- 4) զինակիր, հանդիսատես, հանդիպակաց, սիզանեմ

6 Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:

- 1) փութալ-հապաղել, մսխել-կուտակել, պատվարժան-անարգ
- 2) թանձր-նոսր, վաղանցիկ-մշտնջենական, իրական-երևակայական
- 3) փխրուն-կարծր, ստորին-գերագույն, ողորկ-խորդուբորդ
- 4) գլխավոր-անէական, հինավուրց-բարեկարգ, միավորիչ-պառակտիչ

7 Ո՞ր շարքում բառի սխալ բացատրություն կա:

- 1) *ախտալյուկ* – հիվանդությունից տանջված, *կղմինդր* – թրծած աղյուս
- 2) *ծանձաղ* – փոքր խորություն ունեցող, *լաջվարդ* – ընտիր կապույտ ներկ
- 3) *հողաթափ* – տնային բաց ոտնաման, *հյուլե* – մանրագույն մասնիկ
- 4) *վիրապ* – խոր փոս, *լայնալիճ* – մեծ տրամագծով ջրային տարածք

8

Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ *չկա*:

- 1) Աղմկում է իմ սրտում ամեն գիշեր մի կարոտ, Աղմկում է որպես խուլ ու հեռավոր մի քամի:
- 2) Իմ հիշողության մթագնած հորիզոնի վրա ցցվում է դաժան մի պատկեր. դժվարությամբ եմ ճանաչում դիրքը, կապակցում մարդուն ու շրջապատը:
- 3) Քարերը գլորվում էին դեպի խորխորատները, և նրանց աղմուկից ճերմակափետուր աղավնիները անհանգիստ ճախրում էին:
- 4) Կուսական անտառի օրորուն երգի տակ ազատ թռչկոտող եղնիկի վճիտ հայացքի արտապատկերն է դա:

9

Ո՞ր տարբերակում է *բոլոր կամուրջներն այրել* դարձվածքի իմաստը ճիշտ բացատրված:

- 1) հնազանդվել ինչ-որ մեկին
- 2) ճակատամարտում հաղթել
- 3) հետդարձի ճանապարհ չթողնել
- 4) միշտ հարձակվողի դերում լինել

10

Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:

- 1) խաղող, մեկուսի, հավասար, ամառ
- 2) քույր, գլխարկ, ցորեն, աղյուս
- 3) միրգ, ողկույզ, ամրոց, մարագ
- 4) հավատ, կարմիր, ծիրան, հրապարակ

11

Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-եր* վերջավորությամբ:

- 1) դրամատուն, շարասյուն, միլիոնատեր, եզրակար
- 2) ենթաճյուղ, աստղաբույլ, նոթատետր, հողմացույց
- 3) եզրագիծ, զարդատուփ, հանքափոր, գուգերգ
- 4) երկրամաս, հետագիծ, հացաբույս, տավղահար

12

Ո՞ր շարքի բառերից կամ բառաձևերից ոչ մեկը հոդ *չունի*:

- 1) պատճեն, գալիսոն, ձմռան, պարադոքս
- 2) վրձին, հոգուդ, բագին, սառը
- 3) թատրոն, դեղատան, հարս, ֆիդային
- 4) հանդ, վերջերս, ներս, բերդ

13

Ո՞ր շարքի բոլոր բառերն են գոյականներ:

- 1) կեռման, մոմլաթ, ուղղաձիգ, երեկո
- 2) վարկած, օթևան, թմբիր, անդաստան
- 3) ուսմունք, թուխպ, խոհուն, շոյանք
- 4) մթնշաղ, շինծու, ընչացք, կանթեղ

14

Ո՞ր շարքի բոլոր բայերն են պարզ (առանց բայական ածանցի):

- 1) գրավել, արտահայտել, բռնել, մեծանալ
- 2) կանչել, գովել, խրտնել, սրբագրել
- 3) ջարդել, հուզվել, հոգալ, շնչել
- 4) ցատկոտել, լուսավորել, ավարտել, ծամել

15 Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ *չկա*:

- 1) Ո՞ր աշխարհում ունեն շատ բան՝ Միտք եմ անում՝ է՞ս, թե՞ էն:
- 2) Երազ աշխարհում Ամեն բան հավեա Գալիս է, գնում Ու ցնդում անհետ:
- 3) Գուք, որ հեզնեցիք ուժն ստեղծագործ, Չեր նյութի հանդեպ կգա Ոգու սով:
- 4) Էլ ոչ մի թև ինձ չի տանի Դեպի բարձունքն արծաթյա:

16 Ո՞րն է պարզ համառոտ նախադասություն:

- 1) Սենյակում չաղմկել:
- 2) Գաշտը խոր նիրհել էր:
- 3) Վա՛յ, ընկնում եմ:
- 4) Այժմ անձրևում է:

17 Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ *չկա*:

- 1) Ես մի ճամփորդ եմ՝ մթում մոլորված, Ու հոգնած սիրտս դարձել է խոնարհ:
- 2) Իրար գիրկ ընկան անհուն կարոտով Եվ համբուրվեցին երկար ու երկար:
- 3) Այդ պահին մենք հպարտ էինք ու չէինք կարողանում գսպել մեր հիացմունքը:
- 4) Միևնույնն են ինձ Հյուսիս թե Հարավ, Մի խենթ տազնապ կա իմ հիվանդ սրտում:


18 Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

*Տեսնելով ներս մտնողին՝ աղջիկն ասում է ծառաներին.
- Մի՞թե չեք ճանաչում նրան, որ ներս եք թողել. նա մի անգամ ինձ խաբեց և ահա նորից ուզում է հին խաղը խաղալ:*

- 1) Տեսնելով ներս մտնողին՝ աղջիկն ասում է ծառաներին, թե մի՞թե չի ճանաչում նրան, որ ներս են թողել. նա մի անգամ իրեն խաբեց և ահա նորից ուզում է հին խաղը խաղալ:
- 2) Տեսնելով ներս մտնողին՝ աղջիկն ասում է ծառաներին, թե մի՞թե չեն ճանաչում իրեն, որ ներս են թողել. նա մի անգամ իրեն խաբեց և ահա նորից ուզում է հին խաղը խաղալ:
- 3) Տեսնելով ներս մտնողին՝ աղջիկն ասում է ծառաներին, թե մի՞թե չեն ճանաչում նրան, որ ներս են թողել. ինքը մի անգամ իրեն խաբեց և ահա նորից ուզում է հին խաղը խաղալ:
- 4) Տեսնելով ներս մտնողին՝ աղջիկն ասում է ծառաներին, թե մի՞թե չեն ճանաչում նրան, որ ներս են թողել. նա մի անգամ իրեն խաբեց և ահա նորից ուզում է հին խաղը խաղալ:

19 Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Թեև լեռներից իջնող վարար ջրերը չորս կողմից շրջապատել են մեզ, և հողը երերում է դարձել, այնուամենայնիվ շատ հաճախ ենք գնում զբոսանքների, որ ծառերի տակ՝ քաղցրահամ աղբյուրների ակունքներում, խնջույքներ անենք:



20

Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:

«Կրակից շագանակներ հանել» արտահայտությունն Լաֆոնտենի «Կապիկն ու կատուն»....., որտեղ կատուն, թաթերը, կրակից շագանակ է հանում, իսկ կապիկը`

(առաջանալ, առակ, վառել, վայելել)

- 1) առաջանում է, առակով, վառած, վայելում է
- 2) առաջացել է, առակից, վառելով, վայելում
- 3) առաջացավ, առակում, վառող, վայելում է
- 4) առաջ է եկել, առակից, վառում է, վայելում

21

Ո՞ր նախադասության մեջ ստորակետ պիտի դրվի:

- 1) Պարսպապատերին հապշտապ երևացին զինվորներ զենքերը պատրաստ պահած և հարձակման նշան արեցին:
- 2) Ոստիկանները ժամանեցին կեսօրին և ամբողջ գյուղը տակնուվրա անելուց հետո հայտնաբերեցին Մարգարին:
- 3) Այդ տարի սփյուռքահայության ամենաբազմամարդ կենտրոններից մեկում Բեյրութում էր տեղի ունենում մշակութային փառատոնը:
- 4) Մենք շատ բան ենք կորցրել պատմության քառուղիներում և կորցրածը գտնելու համար դեռ շատ պիտի դեգերենք:

22

Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:

- 1. Սակայն այդտեղ նրա ուշադրությունը գրավեց գետը, որը հոսում էր քաղաքի միջով և անձրևներից դառնում ավելի հորդառատ, բայց որն այժմ լիովին չորացել էր: Պարիսպները չէին անջրպետում նրա հունը մինչև հատակ, այնպես որ զինվորները կարող էին նրա տակով քաղաք մտնել:
- 2. Երկու օրում գրավելով հինգ քաղաք և ստրկացնելով բնակչությանը՝ Մակեդոնացին գնաց դեպի Կյուրոսի քաղաքը: Այդ քաղաքը շրջապատված էր ավելի բարձր պարսպով, քան մնացածները: Այնտեղ էր հավաքվել բարբարոսների մեծամասնությունը, ընդ որում՝ ամենառազմատենչները, այնպես որ այնքան էլ հեշտ չէր լինելու գրավել այն միանգամից:
- 3. Մինչ բարբարոսներն իրենց ամբողջ ուշադրությունը դարձրել էին մեքենաներին և պաշտպանվում էին այն վայրում, որտեղ դրանք կանգնած էին, Ալեքսանդրը իր զորքի մի մասի հետ բոլորից աննկատ քաղաք մտավ այդ գետի հունով և ջարդելով դարպասի մի փոքր հատված՝ ներս թողեց նաև մնացած զորքը:
- 4. Ալեքսանդրը պարսպին մոտեցրեց մեքենաները և ճեղքվածքներ բացելով պարսպի այդ մասում՝ մտածում էր առաջացած անցքերի միջով ներխուժել քաղաք:

- 1) 2, 1, 3, 4
- 2) 2, 4, 1, 3
- 3) 3, 1, 2, 4
- 4) 3, 1, 4, 2

23

Նշվածներից որո՞վ է սկսվում Մուրացանի «Գևորգ Մարգպետունի» պատմավեպը:

- 1) Գլինի կործանման նկարագրությամբ
- 2) Աշոտ Երկաթ թագավորի դեմ հայ իշխանների ապստամբության նկարագրությամբ
- 3) արաբ հրոսակների՝ Հայաստան ներխուժումով
- 4) Գառնո ամրոցի նկարագրությամբ

24

Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

Լիլիթը, աղբյուրի մոտ նստած,, նայում էր դրախտի աստղազարդ երկնքին:

- 1) և աստղերի հրաբորբ ողկույզները արբեցնում էին նրա սիրտը մի խորհրդավոր տենչանքով
- 2) ականջը դրած նրա բյուրեղյա նվագին
- 3) գարթնեց սոխակների սիրահույզ դայլայլներից
- 4) անհամբեր մի քանի անգամ անցնել-դառնալով աղբյուրի շուրջը

25

Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի նախերգանքի երկտողերի ո՞ր հերթականությունն է ճիշտ արտահայտում այդ երկտողերի հաջորդականությունը:

- | | |
|--------------------------------|---------------------------------|
| 1. Որդիդ լինի, թե հերն ու մեր, | 3. Չարն էլ է միշտ ապրում անմեռ, |
| Թե մուրագով սիրած կին | Անե՛ծք նրա չար գործքին |
| 2. Գործն է անմահ, լավ իմացեք, | 4. Երնե՛կ նրան, որ իր գործով |
| Որ խոսվում է դարեդար | Կապրի անվերջ, անդադար |

- 1) 2, 4, 3, 1
- 2) 2, 3, 4, 1
- 3) 4, 2, 1, 3
- 4) 1, 3, 2, 4

26

«Մասնա ծոեր» էպոսի («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր) հերոսներից ո՞ւմ խոսքն է.

*Որ աշխարհք ավերվի, մեկ էլ շինվի,
Եբոր ցորեն էղավ քանց մասուր մի,
Ու գարին էղավ քանց ընկուզ մի,
Էն ժամանակ հրամանք կա, որ էլնենք էդտեղեն:*

- 1) Փոքր Սիերի
- 2) Սեծ Սիերի
- 3) Քեռի Թորոսի
- 4) Դավթի

27

Ա. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմում նշվածներից ո՞րը արտացոլված չէ:

- 1) արևելյան բնապատկերներ՝ ներդաշնակված քնարական հերոսի ապրումներին
- 2) աշխարհը և մարդկանց վերափոխելու համար մարդկությանն ուղղված պայքարի կոչը Աբու-Լալայի կողմից
- 3) հայրենիքի, կնոջ, ընկերների, բարեկամների հանդեպ քնարական հերոսի աստելության դրդապատճառները
- 4) իշխանության, օրենքների, մարդկային փոխհարաբերությունների դատապարտումը

28

Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքի «Ես» հատվածում ո՞րն է հերոսի բարոյական անկման բուն պատճառը՝ ըստ իր իսկ բնութագրման:

- 1) փառասիրությունը
- 2) դավաճանությունը
- 3) կամազրկությունը
- 4) հարբեցողությունը

29

Ա. Բակունցի «Միրհավ» պատմվածքի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Սոնայի ամուսնությունից հետո Դիլանը հեռացավ գյուղից:
- 2) Դիլան դային ամուսնանում է, բայց մինչև խոր ծերություն հիշում է Սոնային:
- 3) Սոնան ամուսնացել էր քաղաքից գյուղ եկած ուսուցչի հետ:
- 4) Անտառապահն ու Դիլանը մտերիմ ընկերներ էին և հաճախ էին միասին զբաղվում միրհավի որսով:

30

Ե. Չաբենցի ո՞ր ստեղծագործությունից են հետևյալ տողերը:

*Այդ բոլոր մարդիկ իմ մահվան բոթից,
Որպես ընդհանուր աղետից սարսած՝
Չարմացած կզգան ինձ այնքա՛ն մոտիկ,
Եվ հանկարծ այնքա՛ն թանկ ու հարազատ:*

- 1) «Տաղ անձնական»
- 2) «Մահվան տեսիլ»
- 3) «Դ-անթեական առասպել»
- 4) «Անվերնագիր»

31

Վ. Տերյանի ո՞ր բանաստեղծության մեջ է սերը զուգորդվում երկնքի աստղերը օղակող կախարդական շրթայի պատկերին:

- 1) «Տխրություն»
- 2) «Գարուն»
- 3) «Fatum»
- 4) «Աշնան մեղեդի»

32

Նշված մտքերից ո՞րը Մխիթար Գոշի որ առակի գաղափարն է արտահայտում:

- | | |
|--|-------------------------|
| ա. Բարձր է դասվում հողագործի տքնաջան աշխատանքը, առանց որի աշխարհը չի կարող լինալ: | 1. «Բամբակենին և Սոսին» |
| բ. Միասնական ջանքերով կարելի է հաղթել հզորին: | 2. «Աստղերը և Լուսինը» |
| գ. Քննադատվում են արտաքինով գեղեցիկ, բայց հասարակության համար անպիտան և փուչ մարդիկ: | 3. «Ոսկին և Յորենը» |
| դ. Երբեմն մարդիկ գերազնահատում են իրենց կարողությունները և ուժը՝ հաշվի չառնելով սեփական հնարավորությունները: | 4. «Արջ և մրջյուն» |

- 1) ա-1, բ-4, գ-3, դ-2
- 2) ա-3, բ-2, գ-1, դ-4
- 3) ա-3, բ-4, գ-1, դ-2
- 4) ա-1, բ-2, գ-3, դ-4

33

Նշել այն բառերի համարները, որոնցում կրկնակ բաղաձայն կա.

1. տա-ազիր,
2. ըն-իմանալ,
3. ու-արկել,
4. տասներկուե-որդ,
5. այ-ուբեն,
6. ամպիո-անի,
7. բա-ադ,
8. խորագ-ին:

34

Ո՞ր բառերում անկախ գործածություն չունեցող արմատ կա.

1. սննդակարգ,
2. ծայրահեղ,
3. արնաներկ,
4. շողարձակ,
5. ծաղկաթերթ,
6. ջրառատ,
7. հիասքանչ,
8. ընդունակ:

35

Ո՞ր տարբերակներում է ընդգծվածը հարակատար դերբայ:

1. Հեղինակը բավական ընդարձակ հավելված էր կցել իր աշխատությանը:
2. Մթամած երկնքում երբեմն փայլատակում էր կայծակի շեղբը:
3. Բուրմունքից արբեցած մի բզեզ քնել էր առէջների մեջ:
4. Խաշնարած այդ ցեղը այդպես էլ մնում է քաղաքակրթության մայրուղու եզրին:
5. Ծովափի կինը կարճ խուզած մազեր ուներ:

36

Տրվածներից որո՞նք են մակբայներ.

1. այսուհետև,
2. արտաքուստ,
3. մասին,
4. միասին,
5. այսպես,
6. միշտ,
7. իսկույն,
8. վաղորդայն:

37

Ո՞ր նախադասություններում բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):

1. Միակ մարդը որ կողմնակից էր բյուզանդական կայսեր Կեսարի հրամանին նրա հավատարիմ զինակիցն էր:
2. Պայուսակները մեջքներին կապած ու պայուսակը որպես բեռ քաշող մի քանի պատանիներ էին:
3. Կայսրը որպես երկնքի որդի հավակնում էր կարծել թե իրավունք ուներ տիրելու ինչպես մարդկային տարերքին այնպես էլ բնությանը:
4. Այդ առեղծվածային դրամները իբրև բախտավորության խորհրդանիշներ հատուկ կտրվել էին նոր տարվա համար:
5. Առվակների ոլորքով կանգնած բարդիները մեղմ օրորվում էին ինչպես խմբապարի հավաքված աղջիկներ:

38

Ո՞ր թվերի տեղում բուժ պիտի դրվի:

Մելանագույն թեթև թիկնոցի մեջ պարտրված(1) աստվածային կեցվածք ընդունած(2) կանգնած էր Համլետը(3) բեմի ճախակողմյան հատվածում աչքերում արցունքի երկու խոշոր կաթիլ որոնց դիպչելով(4) էլեկտրական լույսի շողերը բեկվում լցվում էին դահլիճ(5) ցրելով մութը: Հետո երբ բեմում եղած մարդիկ հեռացան(6) նա մոտենալով իր նման սևազգեստ մեկին(7) շշմոջաց վերջինիս ականջն ի վար Մարդ էր Հորացիո:

39

Տրված բառերից քանիստ՞ում արմատի հնչյունափոխություն կա.

մատուցարան, խուսափել, վերջնագիծ, քննություն, լսափող, նստարան, սառցահատ, վարչապետ:

40 Բառերից քանիստ՞ում հոդակապ կա.

հոգեորդի, այրուծի, գահերեց, գետնանուշ, դառնաթախիծ, անջրանցիկ, դառնադի, որմնախորշ:

41 Տարբերակներից քանիստ՞ում հարկադրական եղանակով դրված բայ կա:

- Նա անպայման պետք է ինձ հետ աշխատի:
- Նա խոստացավ, որ պիտի մի քանի օրից գործընկերներին հանդիպի:
- Եվ օդը սենյակիս Պիտի շարունակի մեծակություն բառից անվերջ դողալ:
- Նա ինձ ասաց, որ ես նոր եմ ուղք դնում կյանք և պետք է իմանամ, թե դեռ ինչեր են սպասում ինձ:

42 Նախադասություններից քանիստ՞ում է ընդգծվածը ենթակա:

- Իրիկնանում է. քաղաքում կամաց-կամաց զարթնում է երեկոյան **աղմուկը**:
- **Տնօրեն** Հակոբյանի և այցելուի միջև սկսվեց մի հետաքրքիր բանավեճ:
- Այդ հիշողությունները ավելոծում էին Գարեգինի **հոգին**:
- Նրա **սիրտը** հաճելիորեն թրթռաց ինչ-որ քաղցր հիշողությունից:

43 Նախադասություններից քանիստ՞ում վերաբերության անուղղակի խնդիր կա:

- Հանկարծ ինձ թվաց, որ իմ շուրջը գտնվող աշխարհը կործանում է իրեն:
- Մեկը իր տեսած երազն էր պատմում, մյուսը՝ տնից ստացած տեղեկությունները:
- Ամեն երեկո ծերունիները մատում էին տանիքներին և պատմում հին-հին քաջերից:
- Հին պատմության ուսուցչուհին շատ գոհ էր այս աննշան թեմայի շուրջ արտասանված հարուստ ճառից:
- Նա գիտեր, որ իր թագավոր ամուսինը հանցավոր էր Ամրամի առաջ, բայց դրա մասին ոչինչ չխոսեց:

44 Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել՝

մակդիր, չափազանցություն, հանգ, շրջադասություն:

<i>Ես շա՛տ այրեցի իմ սիրտը ջահել Սիրո ճամփեքին, սիրո երգերում, Չկա քեզնից զատ բախտ ու վայելում, Չկա ուրիշ վիշտ՝ քո վշտից ավել:</i>	<i>Ինչքան դեռ ունեմ կյանք ու ճանապարհ, Ինչքան հույզ ու լույս, ծիրք ու նվիրում, Ապահովություն, անդորր ու համբավ, Իմ մա՛յր ժողովուրդ, ես քեզ եմ բերում:</i>
--	---

45 Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *ճիշտ է, Միսալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:

1. *Ույ* երկհնչյունը հոլովման և հոգնակիի կազմության ժամանակ ոչ մի բառում չի հնչյունափոխվում:
2. Բառամիջի *յա* երկհնչյունը հնչյունափոխվելիս դառնում է *ե*:
3. *Ույ* երկհնչյունը կարող է հնչյունափոխվել միայն *ու*-ի:
4. Բառասկզբի գրվող *ք*-ն երբեք չի հնչյունափոխվում:
5. Բառասկզբի *խ*-ն շեշտից զրկվելիս միշտ հնչյունափոխվում է:
6. *Ալ* վերջածանցից առաջ բառավերջի *խ*-ն հնչյունափոխվում է *խ*-ի:

Բ մակարդակ

46

Ո՞ր տառը կամ տառակապակցությունը տեղադրելու դեպքում բառը կհամապատասխանի տրված իմաստին. լուծման տարբերակներից ո՞րն է ճիշտ:

- ա. *մեղ-* (1. *ք*, 2. *կ*) - թուլամորթ
- բ. *կար-ին* (1. *գ*, 2. *կ*) - գծագրական գործիք
- գ. *թ-ր* (1. *յու*, 2. *ույ*) – սխալ
- դ. *շառաչ-ն* (1. *ու*, 2. *յու*) - աղմկալից ձայն

- 1) ա-1, բ-1, գ-2, դ-2
- 2) ա-2, բ-2, գ-1, դ-2
- 3) ա-1, բ-2, գ-2, դ-1
- 4) ա-2, բ-1, գ-1, դ-2

47

Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում անջատ:

- 1) մի(երկու), թեթև(քաշային), դիցուք(թե), տեր(Դ-անիել)
- 2) ալ(կարմիր), լույս(ընծայել), ի(դերև)ելնել, դեմ(հանդիման)
- 3) ի(հեճուկա), առ(այն), սրբություն(սրբոց), շիլա(շփոթ)
- 4) ըստ(իս), ձեռք(բերում), թփից(թուփ), կողք(կողքի)

48

Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա:

- 1) գործնական, պիտանի, մատենագիր, ընթացիկ
- 2) պատրանք, սանրվածք, մատուցարան, ընդդեմ
- 3) ձեղնահարկ, կաշուն, մանկավարժ, ուսուցում
- 4) փաղաքշանք, հրաման, խճապատ, դիտողություն

49

Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:

- 1) ընձյուղել-ծլարձակել, գողտրիկ-թաքուն, հիշաչար-քինախնդիր
- 2) գալույթ-ցատում, խաթարել-վնասել, բովանդակ-ամբողջ
- 3) մառան-նկուղ, անճարտար-անհնար, վիհ-անդունդ
- 4) ժուժկալ-գուսպ, ստվար-տարտամ, շրջմոլիկ-թափառական

50

Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր:

- 1) բնօրրան, ածխահանք, տրտմաշուք, տնտեսություն
- 2) յուրօրինակ, տարկետում, վիպասան, տանտիրուհի
- 3) խոսքարվեստ, արևայրուք, պարփակել, երեսունչորս
- 4) տափօղակ, դիտարժան, խոտհարք, բնութագիր

51

Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա (ոչ բոլոր բաղադրիչները և դրանց քանակներն են ճիշտ նշված):

- 1) թղթակցություն = 2 արմատ, 1 ածանց, 1 հոդակապ
- 2) հինգհազարամյա = 3 արմատ, 1 ածանց
- 3) անկայունություն = 1 արմատ, 3 ածանց
- 4) գերատեսչական = 2 արմատ, 2 ածանց, 1 հոդակապ

52

Ո՞ր նախադասության մեջ սխալ կազմությամբ բառ չկա:

- 1) Բաֆֆին չափազանց աշխատասեր էր. օրական երբեմն աշխատում էր տասնչորս ժամ:
- 2) Մենք կարծում ենք, որ այդ ճանապարհով հնարավոր կլինի կանխել ձեռնարկության սննկացումը:
- 3) Պետրոս Դուրյանի մահվանից անմիջապես հետո հոգեբարձուների խորհուրդը, անսալով բազմաթիվ երիտասարդների հորդորներին, որոշեց կառուցել մի մահարձան:
- 4) Հակոբ Պարոնյանը հրաշալի տիրապետում էր հուներենին, քանի որ ծնվել ու մեծացել էր Ադրիանապոլսում:

53

Ո՞ր նախադասության մեջ դերանուն չկա:

- 1) Մայրը, վերջալույսի արևի շողերից աչքերը ձեռքով ծածկելով, նայում էր կաճանի կեռումեռ պտույտին և սպասում, թե երբ են երևալու հարսն ու աղջիկը:
- 2) Կոհակները օրորում էին նավը, կուտակվում, բախվում իրար, հեռու քշվում՝ կործանվելով ահարկու գոռոցով:
- 3) Երկու օր հետո, տարածքը քայլ առ քայլ խուզարկելով, հասնում են քարայրին և կանգ առնում արյունալի տեսարանի առջև:
- 4) Առաջին երկու շաբաթը շատ արագ անցավ, նորեկները սովորեցին գյուղին, և ամեն ինչ մտավ հունի մեջ:

54

Չևաբանական վերլուծության ո՞ր տարբերակում սխալ կա:

Լուսինը մի անհամբեր երեխա է եղել. մի օր, երբ մայրը խմոր է շաղախում, լալով գալիս է, մորից հաց ուզում, իսկ մայրը խմորոտ ձեռքով զայրացած ասպտակում է լուսնին, անհիծում, որ նա երբեք չկշտանա:

- 1) **եղել** - անորոշ դերբայ
- 2) **լալով** - անկանոն բայ
- 3) **խմորոտ** - ածական
- 4) **երբեք** – ժամանակի մակբայ

55

Ո՞ր նախադասության մեջ է թե-ն ստորադասական շաղկապ (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Եվ թախիծ և տրտունջ և տանջանք Դու ես այն թե աշխարհն է լացում:
- 2) Այս քամին է թափում աշնան չոր սաղարթը Թե օդի է թափվում իմ թմրած ուղեղին:
- 3) Ու թող գա թե կա ավելի չար բոթ Մեխլի գոհ-երկրիս անարգված սրտին:
- 4) Սոնան մանկության առվակի ջրերն էր կարոտել թե պատահմամբ մոտեցավ հնձանի դռնակին Դիլան դային չիմացավ:

56

Ո՞ր տարբերակում ներկա ժամանակի բայ չկա:

- 1) Ու երկինքը եկավ փարվեց հողին... Փառք տանք այս իրիկունն արարողին:
- 2) Լռած զանգ է կյանքս... Ես՝ ավերակ վանքս, Էլ արարող չունեմ:
- 3) Վերից է նայում ցածում կանգնածին, Չի նայում երբեք ներքև ընկածին:
- 4) Ամպի տակից ջուր է գալիս, Դոշ է տալիս, փրփրում:

57

Ո՞ր շարքի բոլոր բառերն են վերաբերականներ:

- 1) մի՞թե, անկախ, ահա, անշուշտ
- 2) գոնե, միմիայն, ահավասիկ, լոկ
- 3) իրոք որ, հոգուտ, անգամ, սոսկ
- 4) հապա, ցավոք, թեև, իսկ և իսկ

58

Ո՞ր նախադասության մեջ գերադրական աստիճանով դրված ածական կա:

- 1) Բյուրավոր բանակներ ելան՝ վիթխարի, համարձակ, անահ:
- 2) Շուկայում նա գերադասում էր մրգավաճառների խանութները, որոնք գրավում էին հրապարակի մեծագույն մասը:
- 3) Կարծես մանկական կապույտ երագում Ամեն ինչ այնպես ժպտում էր աննենգ:
- 4) Խուլ գյուղեր կային անտառների խորքում, բարձր լեռների լանջերին և չափազանց խոր ձորերում:

59

Ո՞ր տարբերակում է ընդգծվածը ուղիղ խնդիր:

- 1) Եվ դուք չե՞ք լսում տիեզերքի լեզուն՝ լռությունը, որ իմ հոգում ամեհի եղք դարձավ:
- 2) Հյուղակի ձախ կողմում ժայռը միանգամից ցածրանում էր, և այնտեղից երևում էին մի շարք արտեր:
- 3) Ամեն երեկո մի գեղեցիկ հեքիաթ էր պատմում իր սիրասուն գավակներին:
- 4) Երբ Հայաստան են ասում, Քարն արթնանում է քնից:

60

Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասության երկրորդական նախադասության բնույթը ճիշտ նշված:

- 1) Եվ կրկին հիշողության հեռավոր ծալքերում արթնացավ նա, ումից բաժանվել էր ինքը պատանության տարիներին: *(ենթակա)*
- 2) Իշխանն այլևս չի պարծենա, որ իր դուստրն է հայոց արքունիքի միակ գարդը: *(նպատակի պարագա)*
- 3) Կատարվեց այն, ինչին սպասում էին արդեն մի քանի օր: *(հանգման անուղղակի խնդիր)*
- 4) Հայաստանում այլևս գրագետ մարդ չմնաց, որ կարդացած չլիներ այդ ոգեշունչ հողվածը: *(ժամանակի պարագա)*

61

Ո՞ր տարբերակում բաղադրիչ թերի նախադասություն կա:

- 1) Լռեցին իմ սրտում խնդություն ու երգ, Տխո՛ւր են կանչում աղբյուրներս հիմա:
- 2) Վերջին մշուշն էլ կանցնի շուտով, Կփռվի լույսը խոր ձորերին:
- 3) Իմ կնունքին երկինքը՝ ժամ, արևը՝ ջահ սրբազան, Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերը՝ ավազան:
- 4) Եվ տարիներն այսպես անցնում են, ու ոչինչ չի փոխվում նրա կյանքում:

62

Ո՞ր նախադասության մեջ դերբայական դարձված կա (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Հիվանդը լուռ նայում էր գորշագույն առաստաղին զարմացած ու ակնապիշ:
- 2) Սայրը ցնցվելով ընթանում էր խորդուրդոդ ճանապարհով:
- 3) Լառ-Մարգարն անընդհատ խոսում էր թռռան վրա ձեռնափայտն օդում ճոճելով:
- 4) Ծառերի ճյուղերը զալարվելով փակում էին մարդկանց ճանապարհը:

63

Ո՞ր տարբերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:

- 1) *Եղնիկը, թեև ընտելացել էր մեզ, մեկ-մեկ մեզնից թաքուն բարձրանալով պատշգամբ, լռիկ նայում էր անտառածածկ սարերին:*
Չնայած եղնիկի՝ մեզ ընտելանալուն՝ մեկ-մեկ մեզնից թաքուն բարձրանալով պատշգամբ, լռիկ նայում էր անտառածածկ սարերին:
- 2) *Հենց ձյունապատ կատարները ոսկերվեցին արևի առաջին շողերով, արշավախմբի փորձառու ղեկավարը շարժվելու հրահանգ տվեց:*
Արևի առաջին շողերով ձյունապատ կատարները ոսկերվելուց հետո արշավախմբի փորձառու ղեկավարը շարժվելու հրահանգ տվեց:
- 3) *Քաղաքի բնակչության կեսից ավելին դեռ մինչև հիմա էլ հիշում է այն օրը, երբ գնացքը մոտեցավ նորակառույց կայարանին:*
Քաղաքի բնակչության կեսից ավելին դեռ մինչև հիմա էլ հիշում է գնացքի՝ նորակառույց կայարանին մոտենալու օրը:
- 4) *Ծովը այնքան հանդարտ էր, որ թվում էր շքեղ կտավից իջած անշարժ պատկեր:*
Ծովը շքեղ կտավից իջած անշարժ պատկերի պես հանդարտ էր:

64

Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ չկա:

- 1) Նա, անակնկալի գալով, գրեթե ցնձաց, երբ մի պահ հանկարծ զգաց, որ կարողանում է թղթի վրա մարդկանց դիմագծեր ուրվագծել՝ անգամ աչքերը փակած:
- 2) Մենելայոսը գրկաբաց ընդունեց եկվորներին և հյուրընկալության հենց առաջին օրը նրանց պատվին մի ճոխ խնջույք կազմակերպվեց, որը ժամեր անց՝ կեսգիշերին, վերածվեց արբշիռ գինարբուքի:
- 3) Ինչևէ, փաստն այն էր, որ պայթյունը միայն թեթևակի ցնցել էր շենքը՝ թողնելով այն անվնաս մնա, բայց դժոխսային մեքենայի՝ սարսափ առաջացրած պայթյունից հրդեհ էր բռնկվել:
- 4) Երբ արդեն ներսում էր, ասաց, որ քաղցած չէ, ուզում է քնել. նա ամեն կերպ ճգնում էր կռահել՝ այդ վատ բանը մի՞թե իսկապես կատարվել է:

65

Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:

- ա. Չիս կը պահես դողդողալով
- բ. Չի թ'հովե մ'ալ խորշոմիս
- գ. Դարձյալ խորքիդ մեջ խըռով
- դ. Լըճա'կ, դու ես թագուհիս

- 1) դ, գ, բ, ա
- 2) ա, գ, բ, դ
- 3) ա, բ, դ, գ
- 4) դ, բ, գ, ա

66

Տրված հատվածը Հ. Շիրազի ո՞ր ստեղծագործությունից է:

*Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես կկորչիք վայրագ:*

- 1) «Թագադրում»
- 2) «Գարնանամուտ»
- 3) «Էքսպրոմտ»
- 4) «Մայրս փոքրիկ»

Ո՞ր մտքերն են բխում տեքստի բովանդակությունից կամ չեն հակասում նրան:

1982 թվականին անգլիացի հետազոտող Ջ. Ֆարմանը Անտարկտիդայի վրա հայտնաբերեց մթնոլորտային շերտի ճեղքվածք՝ ավելի քան 1000 կմ տրամագծով: Սա մեծ տազնապ առաջացրեց. չէ՞ որ օզոնային ճեղքերը խիստ վտանգավոր են կենդանի օրգանիզմների համար: Այդ շերտը պաշտպանում է Երկրի մակերևույթը Արևի ուլտրամանուշակագույն ճառագայթներից՝ թույլ չտալով դրանց՝ չափից մեծ քանակի ներթափանցումը: 1985-ին ընդունվում է Վիեննայի համաձայնագիրը՝ օզոնային շերտի պահպանման վերաբերյալ, ըստ որի՝ նախատեսվում է պարզել օզոնային շերտի քայքայման պատճառները և միջոցներ ձեռք առնել դրանց վերացման ուղղությամբ:

Բայց մինչ գիտնականները զբաղված էին այս ուսումնասիրություններով, 1992-ին մեկ այլ ճեղք հայտնաբերվեց, այս անգամ՝ Արկտիկայի վրա, հետո՝ Ուրալյան լեռների հատվածում: Ուսումնասիրողները երկար տարիներ ենթադրում էին, որ օզոնային շերտի նոսրացման ու ճեղքերի գոյացման գլխավոր մեղավորը մարդու արդյունաբերական գործունեությունն է, հատկապես այնպիսի օզոնաքայքայիչ արտադրություններ, որոնցից է, օրինակ, ֆրեոնը, որը լայն կիրառություն ունի սառեցնող սարքերում:

Հակառակն ապացուցեցին հետագա հետազոտությունները. օզոնային ճեղքերը ոչ մի կապ չունեն մարդու գործունեության հետ: Դրանց գոյացումը կապված է Երկրի առանցքի, ուստի և բևեռների աստիճանական փոփոխման հետ, ինչի պատճառով մոլորակի որոշ հատվածներում թուլանում կամ լրիվ բացակայում է մագնիսական դաշտը: Նման վիճակ մեր մոլորակը առաջին անգամ չէ, որ տեսնում է, և դա բնակլիմայական լուրջ փոփոխությունների է հասցնում՝ ազդելով և՛ կենդանիների, և՛ մարդու վրա:

1. Մոլորակի բևեռների փոփոխման հետ կապված՝ որոշ հատվածներում թուլանում կամ վերանում է մագնիսական դաշտը:
2. 1982-ին գիտական շրջաններում անհանգստություն առաջացրեց Անտարկտիդայի և Ուրալյան լեռների վրա հայտնաբերված մթնոլորտային շերտի՝ 1000 կմ տրամագծով ճեղքվածքը:
3. 1985-ի համաձայնագրի հիման վրա ձեռք առնված միջոցները էլ ավելի բարդացրին իրավիճակը. ճեղքեր առաջացան երկրագնդի նաև այլ վայրերում:
4. Օզոնային շերտը խիստ կարևոր է կենդանի օրգանիզմների համար, քանի որ այն պաշտպանում է Երկրի մակերևույթը ուլտրամանուշակագույն ճառագայթներից:
5. Օզոնի քայքայման պատճառը մարդու արտադրական գործունեությունից առաջացող որոշ նյութերն են:

Ո՞ր բառերն են թվական.

1. հնգակի, 2. բյուրավոր, 3. երկու երրորդ, 4. բազմահազարանոց, 5. այսքան,
6. իննսունական, 7. յոթ-յոթ, 8. տասնմեկերորդ:

Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարբերակներն են ճիշտ:

Մեծ երգահանի կերպարը իր՝ Սևակի վկայությամբ վաղուց է եղել բանաստեղծի ստեղծագործական որոնումների կենտրոնում:

1. երգահանի - հատկացուցիչ
2. վաղուց – ժամանակի պարագա
3. վկայությամբ - հիմունքի պարագա
4. կերպարը – ուղիղ խնդիր
5. Սևակի - հատկացուցիչ

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Միայն է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:

1. Ածականը կարող է ունենալ մակբայով արտահայտված լրացում:
2. *Ամենա* բաղադրիչը որոշ բառերում ածանց է, որոշ բառերում՝ արմատ:
3. *Ական, ային, եղեն* ածանցներով կարող են կազմվել և՛ ածականներ, և՛ գոյականներ:
4. Որակական բոլոր ածականներն ունեն համեմատության աստիճաններ:
5. Միայն մեկ արմատից կազմված (պարզ) ածականները կարող են լինել և՛ որակական, և՛ հարաբերական:
6. Որոշ ածականներ կարող են կիրառվել նաև որպես կապ: